



**ԿԱՌԱՎԱՐԻ՝Ր ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՅՔԸ.
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(ռազմավարություն տասնհինգերորդ)**

Մարդիկ անընդհատ փորձում են վերահսկել ձեզ՝ ստիպել գործել իրենց շահերից ելնելով, մանիպուլացնել իրադարձությունները՝ ըստ իրենց քմահաճույքի: Մա հաղթահարելու միակ միջոցը նրանց գերազանցելն է իշխանության համար այս պայքարում, ավելի խելացի և հնարամիտ լինելը: Բայց արդյո՞ք արժե գերազանցել ձեր հակառակորդին յուրաքանչյուր փուլում: Դրա փոխարեն աշխատեք ձեր հարաբերությունների բնույթը դարձնել բյուրեղյա պարզ: Տեղափոխեք հակամարտությունը դեպի բարենպաստ միջավայր, պարտադրեք ձեզ հարմար տեմպ և ռիթմ: Մանևրեք՝ ձեր հակառակորդի մտքերը վերահսկելու համար, սեղմեք ճիշտ կոճակները՝ որոշակի հույզեր առաջացնելու համար և ստիպեք նրանց սխալներ թույլ տալ: Անհրաժեշտության դեպքում թողեք նրանց հավատալ, որ իրենք են ուղղորդում իրադարձությունների ընթացքը. սա կհանգստացնի նրանց և կնվազեցնի նրանց զգոնությունը: Եթե դուք ընդհանուր վերահսկողություն եք իրականացնում՝ որոշելով պայքարի ընդհանուր ուղղությունը և կառուցվածքը, կարող եք նրանց ցանկացած խորամանկություն ձեր օգտին շրջել:

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Իրադարձությունների նկատմամբ հսկողությունը ցանկացած հարաբերությունների անբաժանելի մասն է: Հսկելու և գերիշխող դիրք զբաղեցնելու ցանկությունը արմատացած է մարդկային բնույթի մեջ, ինչպես նաև արմատացած է հակառակ նրա նողկանքի, անելանելիության զգացումը: Երբ մարդկանց միջև հարաբերություններ են զարգանում՝ երկուսի կամ խմբի, անխուսափելիորեն սկսվում են մանևրներն ու ուսումնասիրությունները: Նպատակն է որոշել հարաբերությունների բնույթը և հասկանալ, թե ով է վերահսկելու որոշակի ասպեկտներ: Բնավորությունների բախումը անխուսափելի է:

Որպես ռազմավար, ձեր խնդիրը կրկնակի է: Նախ, դուք պետք է սովորեք ճանաչել այդ իշխանության պայքարը կյանքի բոլոր ոլորտներում՝ առանց խաբվելու նրանց պնդումներով, ովքեր պնդում են, որ իրենք հետաքրքրված չեն վերահսկողությամբ: Հաճախ պարզվում է, որ հենց նրանք են մանիպուլյացիայի ենթարկում ուրիշներին: Երկրորդ, դուք պետք է տիրապետեք ձեր հակառակորդներին շախմատի տախտակի վրա խաղաքարերի պես տեղաշարժելու արվեստին, գիտակցաբար և վերջնական նպատակի գիտակցմամբ: Այս արվեստը հազարամյակների ընթացքում կատարելագործվել է լավագույն և ամենատաղանդավոր զորավարների և ռազմական ստրատեգների կողմից:

Պատերազմը, առաջին հերթին, հակառակորդի գործողությունները վերահսկելու պայքար է: Ռազմական հանճարներ, ինչպիսիք են Հաննիբալը, Նապոլեոնը և, օրինակ, Էրվին Ռոմելը, հայտնաբերել են, որ վերահսկողություն հաստատելու լավագույն միջոցը պատերազմի արագությունը, ուղղությունը և ձևը որոշելն ու թշնամուն պարտադրելն է: Սա նշանակում է հակառակորդին ստիպել ռազմական գործողություններ իրականացնել ձեր սեփական տեմպով, նրանց ներքաշել անձանոթ, բայց ձեզ համար ծանոթ տարածք և ստիպել նրանց խաղալ ձեր պայմաններով: Ամենակարևորը, դա նշանակում է ազդել ձեր հակառակորդների մտածելակերպի վրա՝ ձեր մանևրները մտահղացնելով և իրականացնելով՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական թուլությունները:

Լավ ստրատեգը հիանալի հասկանում է, որ անհնար է լիովին կանխատեսել, թե ինչպես հակառակորդը կպատասխանի այս կամ այն գործողությանը: Դրան հասնելու փորձերը կարող են հանգեցնել միայն հիասթափության և բոլոր ուժերի սպառման: Պատերազմում և ընդհանրապես կյանքում չափազանց շատ անսպասելի և անկանխատեսելի բաներ են տեղի ունենում: Բայց եթե ստրատեգը կարող է վերահսկել հակառակորդի մտածելակերպն ու տրամադրվածությունը, ապա այն

կոնկրետ գործողությունները, որոնցով նա արձագանքում է նրա մանկներին, այլևս այդքան էլ կարևոր չեն: Եթե հնարավոր է շփոթեցնել հակառակորդին, վախեցնել, դառնացնել կամ զայրացնել նրան, ապա վերջինիս գործողությունները կդառնան շատ ավելի կանխատեսելի, այնպես որ ստրատեգը հնարավորություն կստանա նրան անկյունում պահել՝ սկզբում հոգեբանորեն, իսկ հետո՝ ֆիզիկապես:

Հսկողությունը կարող է լինել բացահայտ կամ թաքնված: Այն կարող է արտահայտվել հակառակորդի վրա ուժեղ և միանշանակ ճնշում գործադրելով, որպեսզի նա զրկվի նախաձեռնությունից և ստիպված լինի նահանջել: Բայց կարելի է գործել այլ կերպ՝ ձևանալ թույլ և չհասկացող, որպեսզի հակառակորդը գոտեպնդվի և մոռանա զգուշության մասին կամ ժամանակից շուտ ենթարկվի հարձակման անցնելու գայթակղությանը: Այս խաղի վարպետը հմտորեն համատեղում է երկու մոտեցումները և հասնում զարմանալի հաջողության: Նա հարվածում, նահանջում, հրապուրում է, այնուհետև ջախջախում:

Այս արվեստը լիովին կիրառելի է առօրյա կյանքի մարտերում և ճակատամարտերում: Շատ-շատ մարդիկ՝ ումանք ենթագիտակցորեն, ումանք գիտակցաբար խաղում են այս խաղերը՝ ազդեցություն ձեռք բերելու կամ նախաձեռնությունը իրենց ձեռքը վերցնելու, հակառակորդի յուրաքանչյուր քայլը վերահսկելու համար: Փորձելով գրավել չափից շատը, եթե ոչ ամեն ինչ, նրանք ուժասպառ են լինում, սխալներ են թույլ տալիս, օտարացնում մարդկանց և, ի վերջո, կորցնում իրավիճակի վերահսկողությունը: Այս արվեստը հասկանալով և այն տիրապետելով՝ դուք զգալիորեն ավելի հնարամիտ կդառնաք ձեր հակառակորդին վերահսկելու և ազդելու հարցում:

Երբ սովորեք գնահատել մարդկանց վիճակը և տրամադրությունը, նրանց նախընտրելի տեմպն ու խաղաղույթները, կհայտնաբերեք, որ ձեր գործողություններին ի պատասխան նրանց արած գրեթե ամեն ինչ կհամապատասխանի ձեր արդեն պատկերացրած ընդհանուր դինամիկային: Նրանք կարող են գիտակցել, որ գտնվում են ձեր վերահսկողության տակ, բայց անգոր կլինեն որևէ բան անելու դրա հետ, կամ կարող են շարժվել ձեր ուզած ուղղությամբ՝ նույնիսկ չգիտակցելով դա: Սա վերջնական, առավելագույն հնարավոր վերահսկողությունն է: Ծանոթացեք այս արվեստի չորս հիմնական սկզբունքներին:

Պահեք ձեր հակառակորդին լարվածության մեջ: Մինչև ձեր հակառակորդը որևէ քայլ կանի, նախքան նրանք նույնիսկ հնարավորություն կունենան անսպասելի գործողություններ ձեռնարկելու, դուք կտրուկ քայլ եք անում և նախաձեռնությունը վերցնում եք ձեր ձեռքը: Այժմ դուք ձեր հակառակորդին լարվածության մեջ եք պահում՝ լիովին օգտագործելով այս ժամանակավոր առավելությունը: Դուք չեք

սպասում փայլելու հարմար պահի, դուք ինքներդ եք ստեղծում այն: Եթե դուք ավելի թույլ եք, քան ձեր հակառակորդը, ապա ձեզ քիչ հավանական է, որ վստահեն խաղաղաշտը մաքրելուց ավելի կարևոր բան: Ձեր հակառակորդներին ստիպելով պաշտպանվել և արձագանքել միայն ձեր առաջարկներին, դուք նրանց հուսահատեցնում եք:

Տեղափոխեք մարտադաշտը: Ձեր հակառակորդը, իհարկե, ցանկանում է կռվել ծանոթ տարածքում: Այս համատեքստում «տարածք» ասելով նկատի ունեք մարտի բոլոր մանրամասները՝ ժամանակն ու վայրը, թե ինչի համար են կռվում, ով է ներգրավված և այլն: Հակառակորդին նրբորեն մղելով անծանոթ իրավիճակներ և վայրեր, դուք ձեռք եք բերում մարտի զարգացումն ու ընթացքը վերահսկելու ունակություն: Նույնիսկ չգիտակցելով, թե ինչ է տեղի ունեցել, ձեր հակառակորդը ստիպված կլինի ընդունել ձեր խաղի կանոնները:

Ստիպեք սխալներ թույլ տալ: Ամենայն հավանականությամբ, ձեր թշնամիները կփորձեն կրկին օգտագործել այն ռազմավարությունները, որոնք նախկինում նրանց հաջողություն են բերել: Նախ՝ մարտում գործել այնպես, որպեսզի նրանց հնարավորություն չտրվի կիրառել իրենց ուժը կամ իրականացնել իրենց ռազմավարությունը: Երկրորդ՝ ստիպել նրանց նյարդայնանալ և սխալներ թույլ տալ: Դուք նրանց ժամանակ չեք տալիս ոչնչի համար, դուք գրկում եք նրանց ցանկացած բան անելու հնարավորությունից, դուք խաղում եք նրանց հուզական թուլությունների վրա՝ նրանց նյարդայնացնելով և համբերությունը կորցնելով: Դուք նրանց գցում եք մահացու թակարդի մեջ: Այս դեպքում դուք վերահսկողություն եք ձեռք բերում ոչ այնքան ձեր գործողությունների, որքան նրանց սխալ հաշվարկների միջոցով:

Աննկատ վերցրեք վերահսկողությունը ձեր ձեռքը: Իշխանության ամենաբարձր դրսևորումն այն է, երբ մյուս կողմը հավատում է, որ ինքն է տիրապետում իրավիճակին: Վստահ լինելով իր վերահսկողության մեջ՝ ձեր հակառակորդը չի դիմադրի և նույնիսկ չի մտածի պաշտպանվելու մասին: Այս դեպքում դուք ստեղծում եք տպավորություն թե ընդունում եք նրա շարժման տեմպն ու ռիթմը, բայց միևնույն ժամանակ դանդաղ ու հաստատուն կերպով նրան մղում և շրջում եք ձեր ցանկալի ուղղությամբ:

Նա, ով գիտի, թե ինչպես պատերազմել, նվաճում է ուրիշի բանակն առանց

ճակատամարտի:

Սուն-Ցզի (մ. թ. ա. IV դար)

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. 1940-ի վերջին Մերձավոր արևելքում տեղակայված բրիտանական զորքերը ոչ միայն ապահովեցին իրենց հուսալի դիրքը Եգիպտոսում, այլև կարողացան վերադարձնել Լիբիայի զգալի մասը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի հենց սկզբում գրավվել էին իտալացիները (հիտլերյան Գերմանիայի դաշնակից): Գրավելով Բենգազիա կարևոր նավահանգստային քաղաքը՝ բրիտանացիները պատրաստ էին առաջ շարժվել դեպի Լիբիայի արևմուտք՝ մինչև Տրիպոլի, որպեսզի իտալացիներին վերջնականապես դուրս մղեն երկրից:

Այդ պահին, անսպասելիորեն, նրանց հրամայվեց դադարեցնել հարձակումը: Գնենրալ Արչիբալդ Ուեյվելը, որը Մերձավոր Արևելքում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, միաժամանակ ակտիվ մարտական գործողություններ էր վարում մեծ թվով ճակատներում: Քանի որ իտալացիները ցույց տվեցին իրենց անպատշաճությունը անսպաստային պատերազմում, բրիտանական հրամանատարությունը կարծում էր, որ առայժմ կարելի է իրեն թույլ տալ սահմանափակվել Լիբիայում պաշտպանական գիծ կառուցելով, ուժերը կենտրոնացնելով Եգիպտական ճակատում, իսկ իտալացիների դեմ հարձակումը հետաձգել մինչև հաջորդ տարվա ապրիլ:

Այն լուրը, որ 1941 թվականի փետրվարին Տրիպոլի էր ժամանել գերմանական զրահատեխնիկայի բրիգադը՝ Էրվին Ռոմելի գլխավորությամբ, ոչ մի ազդեցություն չունեցավ այդ ծրագրերի վրա: Մեկ տարի առաջ՝ Ֆրանսիայում տեղի ունեցած բլիցկրիգի ժամանակ, Ռոմելը ապացուցել էր իրեն որպես փայլուն հրամանատար: Սակայն այստեղ նա գտնվում էր իտալական հրամանատարության ներքո՝ մատակարարումների համար կախված լինելով իտալացի անգործունակ մատակարարներից, և նրա բրիգադը չափազանց փոքր էր բրիտանացիների համար որևէ մտահոգություն առաջացնելու համար: Ավելին, հետախուզական հաղորդագրությունները ցույց էին տալիս, որ Հիտլերը նրան Լիբիա էր ուղարկել բրիտանացիների Տրիպոլի մուտքը կանխելու հրամանով, բայց ոչ ավելին:

Սակայն 1941 թվականի մարտի վերջին Ռոմելի տանկերը անսպասելիորեն շտապեցին դեպի արևելք: Ռոմելը, իր միավորումը բաժանելով շարասյուների, դրանք տարբեր հատվածներում ուղղեց բրիտանական պաշտպանական գծի ուղղությամբ: Անհնար էր հասկանալ գերմանացիների մտադրությունները: Մեքենայացված շարասյուները շարժվում էին անհավատալի արագությամբ: Գիշերը տանկերը շարժվում էին անջատված լուսարձակներով, այստեղ և այնտեղ նրանց հաջողվում էր անակնկալի բերել հակառակորդին՝ հանկարծ հայտնվելով մերթ կողքից, մերթ

հետևից: Պաշտպանական գիծը միանգամից ճեղքվեց շատ տեղերում, և բրիտանացիները ստիպված եղան նահանջել դեպի արևելք: Ուելշերը, որը Կահիրեից հետևում էր իրադարձությունների զարգացմանը, ցնցված էր կատարվածից, իրեն վիրավորված ու ջախջախված էր զգում: Ռոմելին՝ անհամաչափ փոքր քանակությամբ տանկերի և սահմանափակ ապահովման պայմաններում հաջողվեց խուճապ սերմանել բրիտանական զորքերում, որոնց կանոնավոր նահանջը վերածվեցին խուճապահար փախուստի: Հաշված շաբաթների ընթացքում գերմանական տանկերը հասան Եգիպտոսի սահմաններին:

Այս հարձակումն այդքան ավերիչ դարձնողը ոչ թե տեխնիկայի և զինամթերքի քանակն էր, որքան Ռոմելի մարտական գործողություններ վարելու նորարարական մոտեցումը: Նա անապատը շահագործում էր այնպես, կարծես այն օվկիանոս լինե, այլ ոչ թե ավազ: Չնայած մատակարարումների պակասին և դժվարին տեղանքին, տանկերը անընդհատ շարժման մեջ էին: Բրիտանացիները չէին կարողանում մի պահ անգամ հանգստանալ, և դա նրանց առավել անհանգստացնում էր, որի արդյունքում հավասարակշռությունը կորցնում էին: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր հարձակում, որքան էլ քառսային թվար, միտումնավոր և հաշվարկված էր: Եթե Ռոմելը մտադիր էր գրավել բնակեցված տարածք, նա իր տանկերը տեղափոխում էր հակառակ ուղղությամբ, ապա շրջապատում էր այն և հարձակվում անսպասելի ուղղությունից: Նա իրեն թույլ էր տալիս շարժել մեծ թվով բեռնատարների շարասյուն, որոնք բարձրացնում էին ավազի և փոշու ամպեր և բրիտանացիները չէին կարողանում տեսնել և հասկանալ, թե ինչ է սպասվում իրենց: Արդյունքում հարձակվող թշնամու ուժերը բրիտանացիների համար շատ ավելի նշանակալից էր թվում, քան իրականում էր:

Ռոմելը մշտապես գտնվում էր առաջնագծում՝ վտանգելով իր կյանքը, ինչը նրան թույլ էր տալիս արտակարգ որոշումներ կայացնել՝ ելնելով իրավիճակից, տեղաշարժելով իր շարասյուները, նախքան բրիտանական հրամանատարությունը կհասցներ կողմնորոշվել և հասկանալ, թե ինչ է կատարվում: Ի տարբերություն բրիտանացիների, Ռոմելը զսպման համար օգտագործում էր տանկեր: Նա դրանք չէր մղում ճեղքումներ ապահովելուն, այլ փոխարենը հարձակման էր ուղարկում ամենաթույլ ստորաբաժանումները՝ հրամայելով նահանջել թշնամու հետ առաջին իսկ բախումից հետո: Բրիտանական տանկերը անխուսափելիորեն կուլ էին տալիս այս խայծը և նետվում էին հետապնդման՝ բարձրացնելով փոշու այնպիսի ամպեր, որ ոչինչ չէին տեսնում անգամ իրեք, և ուղիղ հայտնվում էին գերմանական հակատանկային հրանոթների գծի առջև: Բավարար թվով բրիտանական մեքենաներ

շարքից հանելով՝ Ռոմելը կրկին հարձակվում էր՝ խուճապ սերմանելով բրիտանական հետևակի շրջանում:

Բրիտանացիները, գտնվելով մշտական լարվածության մեջ, ստիպված էին ինչ-որ կերպ արձագանքել Ռոմելի սրընթաց քայլերին, չհասցնելով վերլուծել իրավիճակը, արդյունքում մեկը մյուսի հետևից սխալներ էին թույլ տալիս: Չիմանալով, թե հաջորդ պահին ինչ են ակնկալում, որտեղից են գերմանացիները հայտնվելու և որ ուղղությամբ են հարվածելու, նրանք վտանգավոր կերպով ձգեցին պաշտպանական գիծը: Շուտով բանը հասավ նրան, որ Ռոմելի շարասյուների հայտնվելուն պես, մեկ ակնթարթում, բրիտանացի զինվորները լքեցին դիրքերը և փախան, չնայած այն հանգամանքին, որ նրանք քանակապես գերակշռում էին գերմանացիներին: Ռոմելին կանգնեցրեց միայն Հիտլերի կողմից Ռուսաստան ներխուժումը, որի արդյունքում գնեռալը մնաց առանց օգնական ուժի և մատակարարման, որն անհրաժեշտ էր Եգիպտոսը նվաճելու համար:

Մեկնաբանում

Ահա, թե ինչպես էր Ռոմելը վերլուծում իր սկզբնական իրավիճակը: Հակառակորդը ամուր դիրքեր ուներ Արևելքում, որոնք ամրապնդված էին Եգիպտոսով անցնող անարգել մատակարարման գծերով: Այնտեղից բրիտանացիները ստանում էին ոչ միայն զինամթերք, այլև համալրում: Ռոմելի ուժերը փոքրաթիվ էին, իսկ հնարավորությունները՝ սահմանափակ, և որքան երկար նա սպասեր, այնքան ավելի անիմաստ կլինեին նրա գործողությունները: Գիտակցելով դա՝ նա որոշեց չենթարկվել Հիտլերի հրամաններին և վտանգել իր կարիերան այն ճշմարտության համար, որը հայտնաբերել էր Ֆրանսիայում կայծակնային պատերազմի ժամանակ: Հակառակորդին առաջինը հարվածելը կարող էր ամբողջությամբ փոխել իրադարձությունների ընթացքը: Նույնիսկ եթե թշնամին ավելի ուժեղ էր, նա կարող էր անհանգիստանալ և կորցնել ինքնավստահությունը և անցնել պաշտպանության: Ավելի մեծ բանակի համար, որը անակնկալի կգար, շատ ավելի դժվար կլինեին կազմակերպել կազմակերպված նահանջը:

Որպեսզի իր ռազմավարական պլանը գործեր, անհրաժեշտ էր առավելագույն շփոթություն առաջացնել հակառակորդի շարքերում: Արագությունը, շարժունակությունը և հանկարծակիությունը, որպես գործող ուժեր, որոնք նպաստում են նման խառնաշփոթի առաջացմանը, Ռոմելի համար դարձավ ինքնանպատակ: Երբ հակառակորդը զգում է, որ իրեն կրնակակոխ հետապնդում են, խաբուսիկ մանևրը՝ մի ուղղությամբ շարժվելով, հանկարծ հարվածում էս հակառակ կողմից, կրկնակի արդյունավետ է: Եթե նահանջող հակառակորդը ժամանակ չունի մտածելու

սեփական քայլերի մասին, նա սկսում է անվերջ սխալները սխալներ վրա թույլ տալ: Միննույն ժամանակ, հիմնական մտահոգությունը ճնշումը չթուլացնելն է: Ի վերջո, Ռոմեյի հաջողության բանալին այն էր, որ նա մեկ վճռական մանևրով գրավեց նախաձեռնությունը, այնուհետև լիովին օգտագործեց ձեռք բերված գերազանցությունը:

Այս աշխարհում ամեն ինչ ձեզ դրդում է պաշտպանվել, պաշտպանական դիրք ընդունել: Ձեր աշխատավայրում ղեկավարը ցանկանում է ամբողջ գովասանքը, ուստի թույլ չի տալիս ձեզ նախաձեռնություն ցուցաբերել: Ձեր շրջապատի մարդիկ անընդհատ հրում և հարձակվում են ձեզ վրա՝ ստիպելով ձեզ պաշտպանվել և արձագանքել հարձակումներին: Ձեզ անընդհատ հիշեցնում են ձեր թերությունների և հաջողության հույսի բացակայության մասին: Դուք ստիպված եք մեղավոր զգալ այս և այն բանի համար: Դուք անընդհատ ստիպված եք պայքարել, պաշտպանվել: Այս իրավիճակը ինքնաձիգն աղետ է: Այն շտկելու համար դուք նախ պետք է ազատվեք այս ճնշող զգացումից:

Վճռականորեն գործելով, առանց ուրիշներին ուշքի գալու ժամանակ տալու, դուք ինքներդ եք ձևավորում միջավայրը, ինքներդ եք ստեղծում պայմաններ՝ փոխարեն ձեռքերը ծալած նստելու և պասիվ սպասելու, թե ինչ է բերելու կյանքը: Ձեր առաջին քայլը կփոխի իրավիճակը ձեր օգտին: Թող ուրիշները պատասխանեն ձեր գործողություններին, դա ձեզ կայունություն և կշիռ կտա նրանց աչքերում:

Ձեր ներշնչած հարգանքն ու վախը կվերածվեն հարձակողական էներգիայի, մի հեղինակության, որը կտարածվի ձեր առջև: Ռոմեյի նման, մի փոքր խելագարությունը ձեզ չի վնասի: Դուք պետք է պատրաստ լինեք շփոթեցնել և խաբել ձեր հակառակորդներին, որպեսզի, օգտվելով նրանց շփոթմունքից, կարողանաք առաջ շարժվել՝ անկախ հանգամանքներից: Ձեզանից է կախված որոշել միշտ պաշտպանվել, թե՞ ստիպել ուրիշներին պաշտպանվել ձեզանից:

2. 1864 թվականի սկզբին քաղաքացիական պատերազմը, որը երրորդ տարին էր, ինչ ընթանում էր հարավային նահանգների Կոնֆեդերացիայի և Միության լիգայի (Հյուսիսային Նահանգներ) միջև, փակուղում էր: Վիրջինիայում Ռոբերտ Էդվարդ Լիի հրամանատարությամբ գործող բանակը պահում էր հյուսիսայիններին՝ թույլ չտալով նրանց մոտենալ Կոնֆեդերացիայի մայրաքաղաք Ռիչմոնդին: Արևմուտքում՝ Ջորջիա նահանգում, Կոնֆեդերատները Դալթոնում ունեին անառիկ պաշտպանական դիրք, ինչը թույլ էր տալիս արգելափակել հյուսիսայինների ցանկացած փորձ ճեղքելու դեպի հարավային առանցքային արդյունաբերական քաղաք՝ Ատլանտա:

Նախագահ Աբրահամ Լինքոլնին, նա այդ տարի պատրաստվում էր առաջադրվել նոր ժամկետով սթափ գնահատեց իր հնարավորությունները, եթե չհաջողվի շրջել այս իրավիճակը, ապա Ուլիս Գրանտին կնշանակի Հյուսիսային ուժերի գլխավոր հրամանատար: Լինքոլնը հույս ուներ, որը Գրանտը հայտնի էր որպես վճռական գործողությունների ընդունակ մարդ:

Առաջին բանը, որ Գրանտը հանձնարարեց իր տեղակալին՝ գեներալ Ուիլյամ Թեքումսե Շերմանին, ստանձնել հյուսիսայինների ուժերի հրամանատարությունը Ջորջիայում: Երբ Շերմանը ժամանեց դեպքի վայր, նա տեսավ, որ Դալթոնը վերցնելու ցանկացած փորձ ի սկզբանե դատապարտված է ձախողման: Հարավային բանակի հրամանատար գեներալ Ջոն Ջոնսթոնը պաշտպանական պատերազմի վարպետ էր: Թիկունքից նրա դիրքերը ծածկում էին լեռները, առջևում հուսալի ամրություններ էին: Այս դիրքում Ջոնսթոնն անխոցելի էր. նա կարող էր պարզապես մնալ տեղում՝ ոչինչ չձեռնարկելով: Պաշարումը չափազանց երկար ժամանակ կպահանջեր, և ճակատային հարձակումը կարող էր հանգեցնել հսկայական կորուստների:

Թվում էր, թե հյուսիսայինների վիճակն անելանելի է: Շերմանը հանգեց այն եզրակացության, որ եթե Դալթոնը գրավելն անհնար է, ապա պետք է հարձակում իրականացնել հենց Ջոնսթոնի վրա, որը հայտնի էր իր պահպանողականությամբ և ծայրահեղ զգուշությամբ, և փորձել նրան դուրս բերել հավասարակշռությունից: 1864 թվականի մայիսին Շերմանը ուղարկեց իր բանակի երեք քառորդը՝ հարձակման Դալթոնի ուղղությամբ: Համոզվելով, որ Ջոնսթոնի ամբողջ ուշադրությունը սևեռված է այս հարձակման վրա, Շերմանը բանակի մյուս մասը, որը Թենեսի նահանգի բանակն էր, շրջանցելով լեռները ուղղեց դեպի Ռեասկա փոքրիկ քաղաք, որը գտնվում էր Դալթոնից տասնհինգ մղոն հարավ: Այս մանևրով նա փակեց Ջոնսթոնին ոչ միայն նահանգի միակ ճանապարհից, այլև ապահովման միակ գիծը:

Շրջափակման մեջ հայտնվելով՝ Ջոնսթոնը հասկացավ, որ նահանջելու այլընտրանք չունի: Սակայն նա հանձնվելու մտադրություն էլ չունեւր և փոխարենը հետ քաշվեց մեկ այլ դիրք, որը նաև նրան առավելագույն պաշտպանություն էր ապահովում: Այստեղ Շերմանի հարձակումը անվտանգ էր: Հարձակվելու փոխարեն՝ Շերմանը կրկին դիմեց խաբուսիկ մանևրի: Շուտով նրանց փոխադարձ տեղաշարժերն ու մանևրները սկսեցին պարի նմանվել: Շերմանը մանևրում էր, ապա ինչ-որ կերպ հայտնվում Ջոնսթոնի զորքերից հարավ և այս ամենը շարունակում էր ... մինչև Ատլանտա հասնելը:

Կոնֆեդերացիայի նախագահ Ջեֆերսոն Դևիսը, զայրացած Ջոնսթոնի պասիվությունից, հեռացրեց նրան պաշտոնից՝ փոխարինելով գեներալ Ջոն Հուդով: Շերմանը գիտեր, որ Հուդը հաստատակամ է և վճռական, երբեմն անխոհեմ: Նա նաև

գիտակցեց, որ Ատլանտայի պաշարման համար այլևս ժամանակ և մարդկային ռեսուրսներ չէր մնում, իսկ Լինքոլնին արագ հաղթանակ էր հարկավոր : Շերմանը հրամայեց հարձակվել Ատլանտայի վրա, սակայն պաշտպանական կառույցների վրա նետված ջոկատները կասկածելիորեն փոքր էին և թույլ: Թվում էր, թե նրանց հետ գործ ունենալը դժվար չի լինի: Հուլը չէր կարող դիմակայել այդ գայթակղությանը և թողնելով քաղաքի ամրությունները, նա շտապեց հետապնդել թշնամուն, ինչով հայտնվեց ծուղակում: Հուլի բանակը կորուստներ էր կրում, զինվորների մարտական ոգին արագորեն անկում էր ապրում:

Այժմ, երբ Հուլի բանակը հոգնել էր և վերջապես ընկել էր մարտական ոգին, Շերմանը դիմեց մեկ այլ հնարքի: Օգոստոսի վերջին նրա բանակը սկսեց շարժվել դեպի հարավ — արևելք՝ թողնելով Ատլանտան ու իր ապահովման գծերը, չշեղվելով այն ճանապարհներից, որոնցով ստանում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ էր: Շերմանը հրաժարվեց քաղաքի համար պայքարելու մտադրությունից: Ատլանտայում սկսվեց տարերային տոնակատարություն: Բայց Շերմանի բանակի շարժումն ամեննին էլ հապճեպ փախուստ չէր, Շերմանի համար ամեն ինչ հաշվարկված էր ըստ ժամանակի, նրա բանակի արշավը համընկավ եգիպտացորենի հասունացման հետ, այնպես որ նրա մարդիկ սննդի կարիք չունեին: Դա թույլ տվեց թեթև ճանապարհ անցնել: Շերմանը կտրեց ոչինչում չկասկածող Հուլին վերջին երկաթուղային գիծից, որը դեռ կապում էր Ատլանտան արտաքին աշխարհի հետ, իսկ հետո զորքերը տեղակայեց՝ հարձակվելու առանց պաշտպանության մնացած քաղաքի վրա : Հուլը ստիպված էր լքել Ատլանտան:

Հյուսիսի համար խոշոր հաղթանակը Լինքոլնին տվեց երկրորդ ժամկետով ընտրվելու բոլոր հնարավորությունները: Այս իրադարձություններին հաջորդեց Շերմանի բոլոր մանևրներից ամենախորամանկը և անկանխատեսելին: Բաժանելով իր բանակը չորս շարայան, նա թեթև քայլերով շարժվեց Ատլանտայից արևելք դեպի Սավաննե, դեպի ծով: Նրա մարդիկ գոյատևում էին բերրի հողի վրա և առաջ շարժվելով ոչնչացնում իրենց ճանապարհին ամեն ինչ: Առանց մատակարարման գնացքների, զորքերը շարժվեցին զարմանալի արագությամբ: Մինչ չորս զուգահեռ շարասյուները դեռ հեռու էին, հարավցիները դժվարանում էին կռահել հակառակորդի մտադրությունները: Հարավային շարասյունը, կարծես, ուղղվում էր դեպի Մեյքոն, հյուսիսայինը՝ դեպի Ավգուստա: Համադաշնային զորքերը սկսեցին կուտակվել երկու կետերում էլ, բայց, ինչպես Շերմանը հաշվարկել էր, կենտրոնը մնաց անպաշտպան, և հենց այդտեղ էլ նա հարվածեց: Հարավցիներին ներկայացնելով այն, ինչ նա անվանեց «դիլեմայի այլընտրանք», նա նրանց

նյարդայնացրեց, և այդպիսով հասավ Սավաննե՝ առանց մեծ մարտերին մասնակցելու:

Այս արշավի ազդեցությունն իսկապես ավերիչ էր : Ջորջիայի անկման լուրը ջախջախիչ հարված հասցրեց Համադաշնության զինվորների բարոյական ոգուն, որոնք շարունակում էին կռվել Վիրջինիայում: Նրանցից շատերը ծագումով այդ վայրերից էին, որտեղ գտնվում էր իրենց տները, նրանց հարազատներն ու մտերիմները: Շերմանի արշավը ամբողջ հարավը զցեց խորը խառնաշփոթի և հուսահատության մեջ: Դանդաղ, բայց հաստատ հարավցիները կորցնում էին հաղթելու կամքը: Շերմանի գլխավոր նպատակը իրականացվեց:

Մեկնաբանում

Ցանկացած կոնֆլիկտի դեպքում հաճախ է պատահում, որ իրադարձությունների զարգացումը վերահսկում է ավելի թույլ կողմը: Այս դեպքում հարավը վերահսկում էր ռազմավարությունը բոլոր մակարդակներում: Հետևելով իրենց տեղական, կարճաժամկետ ռազմավարությանը՝ դաշնակիցները ամուր պաշտպանական դիրքեր գրավեցին Ջորջիայում և Վիրջինիայում: Հյուսիսայինները կարող էին ընդունել թշնամու կողմից պարտադրված պայմանները՝ դիվիզիա առ դիվիզիա նետելով անառիկ ամրությունների դեմ, կրելով լուրջ մարդկային կորուստներ և հաջողության հասնելու անարդյունք փորձերով: Հարավի երկարաժամկետ ռազմավարությունը հիմնված էր այն փաստի վրա, որ որքան ձգձգվում էր ստեղծված իրավիճակը, այնքան մեծ էին Լինքոլնի ձախողման հնարավորությունները առաջիկա ընտրություններում: Այդ ժամանակ ռազմական գործողությունները կդադարեցվեին, և կողմերը կսկսեին խաղաղ բանակցություններ վարել: Հարավցիները պարտադրում էին պատերազմի տեմպը (դանդաղ և ուժասպառ) և վերահսկում էին գործընթացը:

Սակայն Շերմանը որոշեց, որ քաղաքի գրավումը կամ կոնֆեդերատների ստեղական ճակատամարտում հաղթելը նրա հիմնական նպատակը չէ: Պատերազմում հաղթելու միակ ճանապարհը նախաձեռնությունը գրավելն էր՝ թշնամուց խլելով իրադարձությունների ընթացքի վերահսկողությունը: Նա խուսափեց հարավցիների ձեռնտու խելահեղ ճակատային հարձակումներից՝ նախընտրելով փոխարենը կիրառել անուղղակի մեթոդներ: Սկզբում նա վախեցրեց զգուշավոր Ջոնսթոնին՝ ստիպելով նրան հրաժարվել իր անվտանգ թաքստոցից, ապա անխռիմ Հուդսոն հրահրեց անթիվ բախումների և հետապնդումների՝ երկու դեպքում էլ նրբորեն խաղալով հակառակորդի հոգեբանության վրա և դրանով իսկ բարձրացնելով իր հարձակման արդյունավետությունը: Անընդհատ ստիպելով թշնամուն ընտրություն կատարել անորոշ իրավիճակում՝ «դիլեմայում», որտեղ և՛ տեղում մնալը, և՛ առաջ-

խաղացումը հավասարապես վտանգավոր էին, Շերմանը կարողացավ վերահսկողություն հաստատել իրավիճակի նկատմամբ՝ գործնականում առանց որևէ զոհի: Ավելի կարևոր է, որ նրա արշավանքը հարավցիներին ցույց տվեց, որ որքան երկար տևի պատերազմը, այնքան ավելի ծանր կլինեն հետևանքները նրանց համար, և այդպիսով նա հասավ պատերազմի լիակատար ռազմավարական վերահսկողության: Կոնֆեդերացիայի համար պատերազմի հետագա երկարաձգումը կլիներ դանդաղ ինքնասպանություն:

Ամենատհաճն այն է, երբ պատերազմում, ինչպես և սովորական կյանքում, ձևավորվում են պատային, փակուղային իրավիճակներ: Թվում է, թե նման դեպքերում ինչ էլ անես, միայն ավելի կխրվես ճահճի մեջ: Եթե դա տեղի է ունենում և ձեզ հաղթահարում է կամքի ու մտքի կաթվածը, ապա դուք կկորցնեք իրավիճակը վերլուծելու, պարզապես մտածելու կամ արձագանքելու ունակությունը: Դրան հանձնվելը նշանակում է, որ ամեն ինչ կորած է: Եթե պարզվել է, որ դուք սայթաքել և հայտնվել եք այնպիսի իրադրությունում, որ ի վիճակի չեք թշնամուն հրապուրել հուսալի թաքստոցից կամ խրվել եք նյարդային և անարդյունավետ հարաբերությունների մեջ, ապա պետք է դառնաք հնարամիտ, ինչպես գեներալ Շերմանը:

Թոթափվեք, փոխեք ձեզ պարտադրված դանդաղ Վալսի ճոճվող ռիթմը՝ իրագործելով առաջին հայացքից անհիմն և անտրամաբանական մի բան: Ձեռնարկեք այնպիսի գործողություններ, որոնք անհասկանալի են ձեր հակառակորդի համար, որոնք չեն տեղավորվում նրանց պատկերացումների շրջանակներում: Այսպես վարվեց Շերմանը՝ առանց գումակները քարշ տալու և ինքնակամ կտրվելով ապահովման աղբյուրներից: Գործեք դանդաղ, ապա սրընթաց:

Մեկ լուրջ ցնցումը կարող է հակառակորդին շեղել ճիշտ ուղուց՝ խաթարելով իրադարձությունների կարգավորված ընթացքը: Սա նրանց կստիպի շտապ որոշումներ կայացնել և հետևել ձեր օրինակին: Նույնիսկ ամենաաննշան փոփոխությունը ձեզ հնարավորություն կտա մանևրելու և իրավիճակը վերահսկելու: Անակնկալը, նորույթը և շարժունակությունը հաճախ բավարար են դանդաղ և անզիջում հակառակորդներին անհանգստացնելու համար:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Ինքներդ ձեզ հանգստություն ապահովելու համար անհրաժեշտ է անհանգստությամբ ծանրաբեռնել թշնամուն: Դա կստիպի պաշտպանվել, և եթե նա անցնի պաշտպանության, նա այլևս չի բարձրանա ամբողջ արշավի ընթացքում:

Ֆրիդրիխ Մեծ (1712-1786)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Այս ռազմավարությունը բացասական կողմ չունի: Ցանկացած փորձ՝ գործը ներկայացնելու այնպես, կարծես դուք չեք վերահսկում իրավիճակը, հարաբերությունների վրա ազդելուց հրաժարվելը իրականում վերահսկողության ձև է: Հրաժարվելով վերահսկողությունից՝ այն ուրիշներին փոխանցելով, դուք ձեռք եք բերում մի տեսակ թաքնված ուժ, որը ժամանակի ընթացքում կօգնի հասնել ձեր սեփական նպատակներին: Բացի այդ, ձեզանից է կախված, թե ում է պատկանում վերահսկողությունը, դուք դա որոշում եք, երբ այն փոխանցում կամ զիջում եք ինչ-որ մեկին: Իշխանության, հարաբերություններում գերակայության համար պայքար գոյություն ունի և դրանից խուսափել չես կարող: Նրանք, ովքեր պնդում են, որ դա այդպես չէ, վարում են ամենանենգ, գաղտնի խաղ՝ նույն նպատակին հասնելու համար:

Սկիզբը.

- 1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
- 2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
- 3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
- 4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
- 5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
- 6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
- 7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
- 8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf
- 9) https://www.datocms-assets.com/63284/1766256811-stance_arm.pdf
- 10) https://www.datocms-assets.com/63284/1771097564-chin-strat-territory_arm.pdf
- 11) https://www.datocms-assets.com/63284/1775331518-battle-war_arm.pdf
- 12) https://www.datocms-assets.com/63284/1782499888-overwhelm-enemy_arm.pdf

Աղբյուրը. <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi>